

լով այժմէն, կը յաւելում՝ թէ հարեւանցի աշխատութեամբ եւ արհեստի շարագրութեամբ ի լոյս բերուած գործ մը չէ այն. երկար եւ բազմամեայ արհեստները գրուած բժշկարան մըն է այն, քառորդ դարու փորձառութեան մը արդիւնք, որպէս կը յայտնէ զայս քաղաքացիական իւր յառաջարանութեան «եւ կիրառութեամբ գտնալին իմ» ներ քսանեւհինգամեայ աշխատանաց իմոց» տողերով, եւ վերջաբանութեան «զբազմամեայ աշխատութեանս իմոյ զարտուղ» բառերով:

Պետրոս Բալանթարեան ծնած լինելով 1735 թուականին Քրիստոսի, ինչպէս կը կարդանք նորա կենդանագրին ստորոտը, յայտնի իմն է՝ որ բժշկարանս շարագրած ժամանակ 1789 ին՝ 54 տարեկան էր նա: Իւր գրած յառաջաբանութեանն ուսանելով՝ թէ 1789 ին արդէն 25 տարուան բժիշկ էր, դիւրին է ասել՝ թէ Պետրոս իւր կենաց 29 երորդ տարին կամ քիչ յառաջ սկսած է բժշկութեան արուեստը: Եթէ նա իւր բժշկական ուսումը Ռուսիոյ մէջ առած չէր, զոր չեմ կարծեր, իւր ստորագրութեան քով նշանակուած «որ այժմ (այսինքն 1789 ին) բնակիմ ի Մոսկով մայրաքաղաքոյս Ռուսաց» բառերէն դատելով՝ կ'ըսեմ որ անշուշտ բժշկութիւն կ'ընէր նա Մոսկովայի մէջ, ուր հարկաւ եւ մեծահամբաւ ճարտարութեան հոչակն հանած բժիշկ մըն էր: Նախիջեւանու տպագրիչն յամի 1793, բժշկարանին ճակատն եւ վերջը, քաղաքացիական անունը «ներհուն բժիշկ», «ճարտար բժիշկ» անվաններով կ'արձանագրէ:

Իւր հոծ հմտութեան հետ կը կրէր նա անշուշտ, որպէս դատելի է իւր գրուածներէն, ազնուամիտ խնարհութեան, վեհանք մարդասիրութեան եւ երկիւղած աստուածալաշտութեան վնեմ զգացումներն, որք ճարտար բժշկի մը զլիսաւոր եւ առաջին յատկութիւններն են: Քաղաքացիական իւր ժամանակին գիտութեանց քաջահմուտը, ունէր անդամազննական եւ անատարանական լաւ ծանօթութիւններ, բուսաբան եւ դեղաբան՝ էր նա կարող բժիշկ մը, ներկուռ իւր արուեստին մէն մի ճիւղերուն:

Հմուտ մայրենի չքնաղ բարբառոյն՝ (թէ եւ գովելի խոնարհութեամբ անտեղեակ այդմ զինքը կը խոստովանի իւր յառաջաբանին մէջ,) իւր բժշկարանը գրած է նա գրաբառ, դիւրահասկանալի ոճով, խառն բժշկականփիլիսոփայական գաղափարներով, որք գրուած ինքազգրութիւնը կ'աւելցնեն: Մեծ իրաւամբ ուրեմն զքաղաքացիական համարելու ենք ԹԵՐԻՈՐԳ

դարու հայ բժշկաց նշանաւորագոյնը, ԹԵՐԻՈՐԳ դարու, յորում՝ ինչպէս կը գրէի ես հերոս¹, հայ բժիշկ-գրիչներ վաղուց լուծ էին եւ քուղայեցոյն բժշկարանը միայն կը տպուէր ու կը բարբառէր:

Քուղայեցոյն բժշկարանը զուտ անձնական փորձառութեան արդիւնք մըն է, ուր ոչ օտար բժշկարանաց փոխառութիւնք կը տեսնուին, ոչ ալ օտար բժշկաց դեղագիրներու հաւաքածոյն կամ անունները կը կարգացուին: Տոհմային բժշկարանաց իսկ հետեւողութիւն չէ այն. մեր նախնի բժիշկներէն եւ ոչ միոյն անունը կը գտնուի մէջը: Եղական աշխատութիւն մըն է, որ թէ եւ համառօտ, («փոքրաքանակ», ինչպէս կը գրէ հատորին վերջն եղած յիշատակութիւնը,) բայց բազմահարուստ է, որպէս կը յարէ նոյն յիշատակարանը:

Բժշկարանէս 600 օրինակ միայն տպուած է ժամանակին, եւ այսօր՝ ինչպէս ըսենք յառաջագոյն, բոլորովին սպառած, գրեթէ անգիւտ գիրք մը եղած է այն:

Արդութեանց յաւերժայիշատակ Մրբաղանին նուիրեալ այս գործը, որ արդէն հարիւր տարիներու կնիքը կը կրէ, բաղձալի էր որ բարերար բանասիրի մը շնորհիւ վերստին ծնանէր եւ ամենուն գրագարանին մէջ փայլէր, ոչ թէ միայն ի յիշատակ անմահ Բալանթարեան, որ շարագրած է զայն յօգուտ հասարակաց, այլ եւ ի յիշատակ քուղայեցի Գերաքեան իշխանին, որ դար մը յառաջ Նոր-Նախիջեւանու տպագրիչն տպարանը հաստատելով՝ բաց ի բժշկարանէս ուրիշ շատ հազուագիւտ գործերու հրատարակման պատճառ եղաւ, եւ ի մասնաւորի Տերմաքայ Արկածից անդրանիկ թարգմանութեան յամի 1794, որպէս գրած եմ 1887 ին Կ.Պօլսոյ «Արեւելք» օրագրոյն 1103 թուոյն մէջ:

Տեղեկութիւն չունիմ՝ թէ քաղաքացիական ունէր բժշկական ուրիշ աշխատութիւններ: Գժուարահաւատալի է, որ այսպիսի բազմահմուտ բժիշկ մը իւր կենացը մէջ մէկ երկասիրութեամբ միայն գոհանար:

Գիտակ չեմ բնաւ նորա կենաց մասնամասնութեանց: Ինքը՝ որդի Յօհաննէս քաղաքացիականի՝ զաւակ էր բժշկի, ունէր զաւակներ, թողո՞ց իրեն արժանաւոր յաջորդ, մինչեւ երբ ապրեցաւ. բժշկարանիս տպագրութեան 1793 թուականը նորա 58 տարիքը կը յայտնէ, աւելի տեւեց իւր կեանքը, ո՞ր թուականին մեռաւ, ո՞ր

¹ Տես «Արեւելք», ԹԻՒ 1928, 2 յուլիսի 1890 ամի: